

Թիւ 25648
Մարտ 8, 1978

Գերաշնորհ

Տ. Արիս Սպս. Եկրվանեան

Հովիւ Ս. Երբորդութիւն Եկեղեցւոյ

Նախազահ ծխական Խորհուրդի

Թորոնթօ.

Սիրելի Արիս Սրբազան,

Ատացած ենք Փետրուար 28, 1978 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախազահութեամբ Յունուար 29ին գումարուած համայնքիդ ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի շորս անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու կը վաւերացնենք ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ արուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան ղըկել ծխական Խորհուրդի նորընտիր Դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Ժիրայր Թորիքեան

Մատաթ Բ. Մամուրեան

Պարզեւ Խոճամեան

Հրաչ Եհշմանեան